ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբիկ Հակոբյանի, Թևան Պողոսյանի և Ալեքսանդր Արզումանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-455-04.03.2014-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Համաձայն նախագծին կից հիմնավորման՝ նախագիծը միտված է օրենսդիր մարմնի աշխատանքներին առավել դինամիկ ընթացք հաղորդելուն: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես համամիտ և շահագրգիռ է այդ հարցում, քանի որ արդյունքում հնարավորություն կստեղծվի քննարկելու առավել մեծ թվով օրենսդրական նախաձեռնություններ, սակայն, կարծում ենք, որ ներկայացված նախագիծը գործնականում մի շարք հարցեր է հարուցում: Մասնավորապես՝

ա. յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ գումարվող եռօրյա նիստերին անցման պարագայում արդյո՞ք չի տուժի մշտական հանձնաժողովների աշխատանքը,

բ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ շաբաթվա բոլոր օրերին հանձնաժողովների նիստեր են տեղի ունենում, խորհրդարանական լսումներ կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարվելու դեպքում արդյո՞ք չի խաթարվի հանձնաժողովների աշխատանքը,

գ. արդյո՞ք պատգամավորները ժամանակ և հնարավորություն կունենան լիարժեք ուսումնասիրելու և քննարկելու նախագծերը՝ մինչև դրանց եռօրյա նիստի օրակարգում ընդգրկելը, աշխատանքային քննարկումներ ունենալու նախագծերի հեղինակների հետ:

Համաձայն չենք նախագծին կից հիմնավորման մեջ նշված այն պնդման հետ, որի համաձայն «չորսօրյա նիստերի վերջին օրը Ազգային ժողովն աշխատում է ոչ այնպիսի արդյունավետությամբ, ինչպես որ քառօրյա նիստերի առաջին օրերին»: Ավելին, քառօրյա նիստերի ընթացքում քննարկված հարցերի՝ ըստ օրերի վերլուծությունը, վկայում է հակառակի մասին:

Այս տեսակետից Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագծի ընդունումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ողջունելով և համամիտ լինելով օրենսդրական նախաձեռնության հեղինակների՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակադրումներին, պատրաստ է նախագծի հեղինակների հետ համագործակցել առավել գործուն մեխանիզմներ գտնելու հարցում, առավել ևս այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում շրջանառվում են բազմաթիվ օրենքների նախագծեր, որոնք դեռ չեն քննարկվել և դրա արդյունքում Հայաստանի Հանրապետության

կառավարությունը չի կարողանում ժամանակին կյանքի կոչել իր քաղաքական հանձնառությունները:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հ. Թովմասյանը:

Նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ՀՀ ԱԺ հերթական նստաշրջանների նիստերի անցկացման ժամկետներին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է ՀՀ Ազգային Ժողովի հերթական նստաշրջաններն անցկացնել նստաշրջանի բացման օրվանից սկսած՝ երկու շաբաթը մեկ գումարվող եռօրյա նիստերի միջոցով, գործող երեք շաբաթը մեկ գումարվող քառօրյա նիստերի փոխարեն:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն
«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-455-04.03.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին կետի թ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 4. Օրենքի 24.1-րդ հոդվածի 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 5. Օրենքի 24.4-րդ հոդվածի 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1. 3-րդ կետում «չորսօրյա» բառերը «փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 5-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 7. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1. 1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ սեպտեմբերի երկրորդ երկուշաբթի օրից մինչեւ դեկտեմբերի երկրորդ չորեքշաբթին եւ փետրվարի առաջին երկուշաբթի օրից մինչեւ հունիսի երկրորդ չորեքշաբթին:»:

2. 1.1-րդ կետում «երեք շաբաթը» բառերը փոխարինել «երկու շաբաթը» բառերով:

3. 1.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

4. 1.2-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

5. 1.3-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

6. 1.3-րդ կետի 2-րդ պարբերությունում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

7. 1.3-րդ կետի 2-րդ պարբերության ա) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

8. 1.3-րդ կետի 2-րդ պարբերության բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

9. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

10. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

11. 3.1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

12. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

13. 4.1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

14. 4.2-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

Հոդված 9. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1. վերնագրում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

4. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

5. 3-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

6. 3-րդ կետի գ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 10. Օրենքի 38-րդ հոդվածում՝

1. վերնագրում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 2-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

4. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

5. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

6. 9-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

7. 9-րդ կետի ա) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

8. 9-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

9. 10-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

10. 12-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 11. Օրենքի 40-րդ հոդվածի 1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 12. Օրենքի 41-րդ հոդվածում՝

1. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 5-րդ կետի ա) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 5-րդ կետի գ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

4. 7-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 13. Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 14. Օրենքի 49-րդ հոդվածում՝

1. ա) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. թ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. ժե) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 15. Օրենքի 51-րդ հոդվածում՝

1. 1.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 7-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

3. 8-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

4. 9-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 16. Օրենքի 52-րդ հոդվածում՝

1. 3.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 4-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

3. 5-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

4. 5.1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

5. 6-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

6. 7-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 17. Օրենքի 54-րդ հոդվածում՝

1. վերնագրում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 2.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

4. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

5. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 18. Օրենքի 55-րդ հոդվածում՝

1. 2-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 12-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 19. Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 20. Օրենքի 65-րդ հոդվածի 1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

Հոդված 21. Օրենքի 67-րդ հոդվածում՝

1. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 4.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

Հոդված 22. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1. 2-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 6-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 23. Օրենքի 71-րդ հոդվածում՝

1. 1.1-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 24. Օրենքի 73-րդ հոդվածում՝

1. 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 5-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 25. Օրենքի 77-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 26. Օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 27. Օրենքի 79-րդ հոդվածի 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 28. Օրենքի 90-րդ հոդվածում՝

1. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 5-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 29. Օրենքի 97-րդ հոդվածում՝

1. 1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 6-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 30. Օրենքի 99-րդ հոդվածում՝

1. 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 5-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 31. Օրենքի 99.1-րդ հոդվածում՝

1. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 32. Օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 33. Օրենքի 102-րդ հոդվածի 1-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 34. Օրենքի 103-րդ հոդվածի 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 35. Օրենքի 104.1-րդ հոդվածի 4-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 36. Օրենքի 104.2-րդ հոդվածում՝

1. 1-ին կետի 2-րդ պարբերությունում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 37. Օրենքի 105-րդ հոդվածի 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 38. Օրենքի 105.1-րդ հոդվածում՝

1. 3-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

2. 7-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

Հոդված 39. Օրենքի 105.2-րդ հոդվածում՝

1. 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 1-ին կետի ա) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

3. 1-ին կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

4. 1-ին կետի գ) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

5. 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

6. 2-րդ կետի ա) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

7. 2-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

8. 2-րդ կետի գ) ենթակետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բառերով:

9. 5-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

10. 7-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բաերով:

11. 11-րդ կետում «չորսօրյա» բառերը փոխարինել «եռօրյա» բաերով:

Հոդված 40. Օրենքի 107-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 41. Օրենքի 108-րդ հոդվածի 2-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 42. Օրենքի 110-րդ հոդվածում՝

1. 1-ին կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

2. 3-րդ կետում «չորսօրյա» բառը փոխարինել «եռօրյա» բառով:

Հոդված 43. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, որպես օրենսդիր մարմնի, աշխատանքներին առավել դինամիկ ընթացք հաղորդելով: Փորձը ցույց է տվել, որ չորսօրյա նիստերի վերջին օրը Ազգային ժողովն աշխատում է ոչ այնպիսի արդյունավետությամբ, ինչպես որ քառօրյա նիստերի առաջին օրերին, ինչն էլ իր անիմաստ ազդեցությունն է ունենում Ազգային ժողովում քննարկվող օրենսդրական նախաձեռնությունների որակի վրա: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաեւ այն, որ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը պրոֆեսիոնալ հիմունքներով գործող խորհրդարան է՝ ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջաններն անցկացնել նստաշրջանի բացման օրվանից սկսած՝ երկու շաբաթը մեկ գումարվող եռօրյա նիստերի միջոցով, գործող երեք շաբաթը մեկ գումարվող քառօրյա նիստերի փոխարեն: